ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2021 թվականի Ն 2171

ԱՆԱՀԻՏ ՍԱՐԻԲԵԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Սոնյա Թումանյանի դիմումի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.09.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.09.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի թիվ 3 2 հասցեում սեփականատիրոջ կողմից առանց համապատասխան շինարարության թույլտվության իրականացրել է տան պատի մեջ /արևմտյան/ ինքնակամ պատուհանի բացվածք:

2021 թվականի սեպտեմբերի 28-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 13-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Վարչական վարույթի լսումներին ներկայացել են Սոնյա Թումանյանը, նրա լիազորված անձ՝ Սամվել Թումանյանը և Անահիտ Ղազարյանը:

Սոնյա Թումանյանի լիազորված անձ՝ Սամվել Թումանյանը պնդել է Սոնյա Թումանյանի դիմումի մեջ ներկայացված պահանջը:

Անահիտ Ղազարյանը հայտնել է, որ ինքնակամ բացված լուսամուտը ոչ մի կերպ չի խանգարում իր տան լուսավորությունը և ընդունել է այն փաստը, որ լուսամուտը բացել է ինքնակամ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակահիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32 րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 219¹-րդ, 245 րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1 ին մասով, 53-րդ, 58 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անահիտ Սարիբեկի Ղազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Անահիտ Սարիբեկի Ղազարյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2021 թվականի N 2172

ԶԱՎԵՆ ԲՈՐԻԿԻ ԼԱԼԱՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զավեն Լալայանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Զավեն Բորիկի Լալայանին 2021 թվականի հոկտեմբերի 25-ից ազատել Վանաձոր համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնից:

2. Ֆինանսական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2173

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 102 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼՎԱՐԴ ՈՍԿԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Ոսկանի Մելքոնյանի (ծնված՝ 01.11.1963թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 04.05.2021թ. տրված թիվ 1252 (նոտարական ակտի կոդ: 741-20210504-88-5083565) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.06.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-84/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵԲԻԼՅԱՆ, ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 102 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 350.7քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 350.7քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233 Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ալվարդ Ոսկանի Մելքոնյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 102 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 350.7քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 2020թ. կառուցված 6.82քմ մակերեսով զրուցարանի:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, թիվ 102/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2174

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 18Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻՍԱՔ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միսաք Խաչիկի Եղիազարյանի (ծնված՝ 30.09.1954թ.) դիմումը, 29.08.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 11.01.2007թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 64 վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի տեղեկանքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 21.05.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-69/ 21 Ի եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ՌՈԲԵՐՏԻ ԹԱՄԱՉՅԱՆԻ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց 18ա հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ և կից 15.6քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1953-1987թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 350.0քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Միսաք Խաչիկի Եղիազարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 18ա հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ մակերեսով հողամասին կից 15.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Միսաք Խաչիկի Եղիազարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց 18ա հասցեի 350.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Ավետիսյան 18ա հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա. Ավետիսյան փողոց, թիվ 18/5 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2175

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 52 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՌԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Վարդանի Ծատինյանի 23.06.2021թ. թիվ 8862 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 52 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5 դ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 7.36քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 6.94քմ) մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 48.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1 ին կետում նշված ինքնակամ կառուցված մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մառանի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մառանը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 52 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի փողոց, 52/9 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2176

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՔԻՄԻԱԳՈՐԾՆԵՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԵՆ ՍՈՒՐԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՂԱՍԻ ԿԱՐԼՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սուրիկի Հարությունյանի և Աղասի Կարլոսի Հարությունյանի լիազորված անձ Սուրիկ Կարլոսի Հարությունյանի դիմումը, 02.06.2021թ. տրված թիվ 2483 (նոտարական ակտի կոդ՝ 763-20210602-90-5143022) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04062021-06-0050 վկայականը, «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող Արմեն Սուրիկի Հարությունյանին և Աղասի Կարլոսի Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած 0.0441հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2.Տարանջատել Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող Արմեն Սուրիկի Հարությունյանին և Աղասի Կարլոսի Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն «ՄԱՐ-ՄՈՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:
3. Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.
ա) 0.02205հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 130.03քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Քիմիագործների 2-րդ փողոց, 20/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).
բ) 0.02205հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 189.7քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Քիմիագործների 2-րդ փողոց, 20/2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650014, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2177

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 24 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25052020-06-0002 վկայականը, Վանաձոր համայնքի ավագանու 24 հունիսի 2020 թվականի թիվ 63 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 32-3/2 հասցեում գտնվող, «Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից օգտագործվող՝ Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը անհատույց՝ անորոշ ժամկետով, օգտագործման իրավունքով տրամադրելու «Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2. Սույն որոշման 1-ին կետով «Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին հանձնվող գույքը թույլատրել օգտագործել միայն նախակրթական ծրագրերի համար:

3. Արգելել դրանք փոխանցել 3-րդ անձի, օտարել, տալ վարձակալության կամ օգտագործման, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն առանց համայնքի ղեկավարի թույլտվության:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ «Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 32-3/2 հասցեում գտնվող Վանաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող շինության և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի անհատույց տրամադրման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԵԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2178

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 8.4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Լիազորված անձ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2179

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍ (ՆԱԽԿԻՆ ՏԱՎՐՈՍԻ 1 ՓՈՂ. ԹԻՎ 12/Ա), 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 12Ա (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՅՈԺԱ ՎՈԼՈԴԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Վոլոդի Զաքարյանի (ծնված՝ 12.11.1959թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 27.07.2021թ. թիվ 2363 (նոտարական ակտի կոդ: 775-20210727-66-5265661) հայտարարությունը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 14.09.2021թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-125/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված տեղեկանքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս (նախկին Տավրոսի 1 փող. թիվ 12/ա), 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 12ա (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.67քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.67 քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել Սերյոժա Վոլոդի Զաքարյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս (նախկին Տավրոսի 1 փող. թիվ 12/ա), 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 12ա (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.67քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս (նախկին Տավրոսի 1 փող. թիվ 12/ա), 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 12ա (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամասի 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 12/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2180

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՓԱՐԱՋԱՆՈՎ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համեստ Ֆուրմանի Սուքիասյանի 15.09.2021 թվականի թիվ 02/13121 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07102014-06-0004 վկայականը, 30.08.2021թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 3833 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20210830-2-5346078), 23.09.2021թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 23.09.2021թ. թիվ ԱՏ-23092021 06-0294 տեղեկանքը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ , 13-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Փարաջանով փողոց թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0.04հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Հանդիսանալ օրինական Վանաձոր քաղաքի Փարաջանով փողոց թիվ 3 հասցեում գտնվող 0.04հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 66.06քմ արտաքին ընդհանուր մակերեսով (ներքին ընդհանուր մակերեսը՝ 66.06քմ) բնակելի նշանակության շինությունները:
3. Համեստ Ֆուրմանի Սուքիասյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը 66.06քմ արտաքին ընդհանուր մակերեսով (ներքին ընդհանուր մակերեսը՝ 66.06քմ) բնակելի նշանակության շինությունների համար 130080 (հարյուր երեսուն հազար ութսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2181

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ԵՎԱԼՈՒՄ ԱՆԱՀԻՏ ՏԻԳՐԱՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՉՈՒԽԱՋՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 3 ՇԵՆՔ ԹԻՎ 2 ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Տիգրանի Կոստանյանի 01.03.2021թ. թիվ 2966 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01092020-06-0035 վկայականը, «Խանդակ» համատիրության կառավարչի կողմից 26.02.2021թ. տրված թիվ 43 տեղեկանքը, Վանաձոր քաղաքի Չուխաջյան թաղամաս թիվ 3 շենքի սեփականատերերի համաձայնությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Անահիտ Տիգրանի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Չուխաջյան թաղամաս թիվ 3 շենքի ծավալում 13.5քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանը և Չուխաջյան թաղամաս թիվ 3 շենք թիվ 2 բնակարանում կատարված թվով 4 ինքնակամ ձևափոխումները:
2. Սույն որոշման 1 ին կետում նշված 13.5քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը՝ 53170 (հիսուներեք հազար հարյուր յոթանասուն) դրամ և թվով 4 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 7880 (յոթ հազար ութ հարյուր ութսուն) դրամ գումարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տ. Չուխաջյան թաղամաս, 3 շենք, 2/1 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2182

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 6 ԴՊՐՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՏԱՂԱՎԱՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Գառնիկի Ավետիքյանի 19.03.2021թ. թիվ 3994 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 09.07.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-91/21 Ի եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 9.75քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 9.10քմ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 34.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Փոխել Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հարավային մասում գտնվող 0.00342հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված տաղավարի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասը ոտղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Գ.Լուսավորչի փողոց, 45/2 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2183

ԶՈՀՎԱԾ ՉԻՆԾԱՌԱՅՈՂ ԱՐՄԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով զոհված զինծառայող Արմեն Սեյրանի Մարտիրոսյանի մոր՝ Էլմիրա Էդիկի Մաշակարյանի և կնոջ՝ Քրիստինա Սամվելի Գևորգյանի դիմումները, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերով, Վանաձոր համայնքի ղեկավարի 22.12.2016 թվականի թիվ 614-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 19.10.2021թ. եզրակացությամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել զոհված զինծառայողի բնակարանի կարիքավոր ընտանիքի ամփոփ ցուցակը:

2. Սույն որոշումը և ամփոփ ցուցակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՍԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Բ. Վանաձոր. Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2184

ՀԱՇՄԱՆԴԱՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաշմանդամ զինծառայող Հրաչյա Հովհաննեսի Հարությունյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերով, Վանաձոր համայնքի ղեկավարի 22.12.2016 թվականի թիվ 614-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 19.10.2021թ. եզրակացությամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել զոհված զինծառայողի բնակարանի կարիքավոր ընտանիքի ամփոփ ցուցակը:

2. Սույն որոշումը և ամփոփ ցուցակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2185

ԶՈՀՎԱԾ ՁԻՆԾԱՌԱՅՈՂ ՎԱՆԻՉԿԱ ՌՈՒԲԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով զոհված զինծառայող Վանիչկա Ռուբիկի Սարգսյանի կնոջ՝ Աննա Խաչատուրի Աբովյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերով, Վանաձոր համայնքի ղեկավարի 22.12.2016 թվականի թիվ 614-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 19.10.2021թ. եզրակացությամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել զոհված զինծառայողի բնակարանի կարիքավոր ընտանիքի ամփոփ ցուցակը:

2. Սույն որոշումը և ամփոփ ցուցակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2186

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 81Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱՔՍԻ ՍԵՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արաքսի Սենիկի Մանուկյանի 06.10.2021թ. թիվ 14207 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08092021-06-0051 վկայականը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1712829 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) և դ) ենթակետերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233 Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 81գ հասցեում գտնվող, Արաքսի Սենիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքի զբաղեցրած, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.012037հա հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Արաքսի Սենիկի Մանուկյանի սեփականության իրավունքը, որից 0.006465հա հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունք, իսկ 0.005572հա հողամասի նկատմամբ ճանաչել բաժնային սեփականության իրավունք, որից 0.005572հա հողամասը գտնվում է 0.011145հա ընդհանուր բաժնային սեփականության հողամասում, որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Տիգրան Մեծի պողոտա թիվ 81գ հասցեի անշարժ գույքին և Տիգրան Մեծի պողոտա թիվ 81Ա հասցեի անշարժ գույքին, ընդհանուր բաժնային սեփականության 0.011145հա հողամասի նկատմամբ սահմանված են հավասար բաժնեմասեր, յուրաքանչյուրին՝ 0.005572հա:

2. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոփոխանցված է ՀՀ հողային օրենսգրքի 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջի համաձայն, պայմանով, որ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման դեպքում:

3. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Մեծի պողոտա թիվ 81գ հասցեում Արաքսի Սենիկի Մանուկյանի սեփականության իրավունքով պատկանող 165.64քմ մակերեսով տարածքում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող թվով 8 ինքնակամ ձևափոխումները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

4. Արաքսի Սենիկի Մանուկյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ թվով 8 ինքնակամ ձևափոխումների համար 30170 (երեսուն հազար հարյուր յոթանասուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 81/3 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2021 թվականի N 2187

ԳՈՌ ԿԱՌԼԵՆԻ ԲԱԴՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոռ Բադյանը դիմումը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության» մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ ***որոշում եմ.***

1. Գոռ Կառլենի Բադյանի 2021 թվականի նոյեմբերի 01-ից ազատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետի պաշտոնից:

2. Ֆինանսական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 2188

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2168 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 22 հոկտեմբրի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածքում 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների տեղամասային կենտրոններ սահմանելու մասին» թիվ 2168 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 1-ին կետում ««Բելիսիմո» ք.Վանաձոր, Բաթումի փ. 9ա» բառերը փոխարինել «Շ.Ազնավուրի մշակույթի պալատի արևմտյան մասնաշենքը, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պ. շենք 2 » բառերով:

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանումներին, թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 26
ք Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Բ. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 2189

ԼԻԱՆԱ ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.09.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.09.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Լիանա Սարգսյանը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 21-3/1 հասցեում կատարել է ինքնակամ շինարարական աշխատանքներ:

2021 թվականի սեպտեմբերի 28-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 18-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Լիանա Սարգսյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը առկա չէ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283 րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ

կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Լիանա Արարատի Սարգսյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 2190

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածքում 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

N	ՇԵՆՔԻ ՀԱՍՑԵ	ՊԱՏԻ ԴԻՐՔԸ	ՉԱՓԵՐԵՍԸ
1	2	3	4
1	Կ.Դեմիրճյան փողոց թիվ 14	հյուսիսային պատի արևմտյան մաս	6.0քմ
2	Բանյոնի փողոց թիվ 4	արևելյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
3	Բաղրամյան պողոտա թիվ 74	շենքի հարավարևմտյան ճակատ	6.0քմ
4	Շիրակացու փողոց թիվ 2	արևելյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
5	Թևոսյան փողոց թիվ 13ա	շենքի հարավային ճակատ	6.0քմ
6	Նարեկացու փողոց թիվ 47	շենքի հարավային պատի արևելյան մաս	6.0քմ
7	Նարեկացու փողոց թիվ 37	շենքի հարավային ճակատ	6.0քմ
8	Սարի թաղ. 1-ին փողոց. թիվ 1 տուն	արևմտյան ճակատ	6.0քմ
9	Տարոն-1 թիվ 3	շենքի հարավարևմտյան ճակատ	6.0քմ
10	Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 77	շենքի արևմտյան ճակատ	6.0քմ
11	Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 1	շենքի արևելյան ճակատ	6.0քմ
12	Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 1	շենքի արևելյան ճակատ	6.0քմ
13	Տարոն-2 ՔՇՀ-7 թիվ 7	հարավային պատին	6.0քմ
14	Տարոն-4 Մ/Ս թիվ 52ա	հյուսիսային պատին	6.0քմ
15	Տարոն-4 Կանակա թիվ 27	արևելյան պատին	6.0քմ
16	Երևանյան խճ. թիվ 175բտ	արևմտյան պատ	6.0քմ
17	Երևանյան խճ. թիվ 84	հյուսիսային պատ	6.0քմ

18	Երևանյան խճ. թիվ 129	հարավային պատ	6.0քմ
19	Չուխաջյան փողոց թիվ 34	հյուսիսային պատ	6.0քմ
20	Չուխաջյան փողոց թիվ 6	արևմտյան պատ	6.0քմ
21	Երևանյան խճ. թիվ 68	հյուսիսային պատ	6.0քմ
22	Երևանյան խճ. թիվ 62	հյուսիսային պատ	6.0քմ
23	Ներսիսյան փողոց թիվ 1	հարավային պատ	6.0քմ
24	Աղայան փողոց թիվ 67	հարավային ճակատ	6.0քմ
25	Աղայան փողոց թիվ 74/1	հյուսիսային ճակատ	6.0քմ
26	Ներսիսյան թաղ. թիվ 1	արևմտյան պատ	6.0քմ
27	Կնունյանց փողոց թիվ 2	հարավարևմտյան ճակատ	6.0քմ
28	Կ.Հալաթյան փողոց թիվ 3 տուն	հարավային ճակատ	6.0քմ
29	Աղայան փողոց թիվ 59/1	հարավային ճակատ	6.0քմ
30	Նար-Դոսի փողոց թիվ 28 տուն	հյուսիսային ճակատ	6.0քմ
31	Չոր Անդրանիկի փողոց թիվ 99	արևմտյան պատ	6.0քմ
32	Չոր Անդրանիկի փողոց թիվ 58	հյուսիսային պատ	6.0քմ
33	Աբովյան փողոց թիվ 64	արևելյան պատի հյուսիսարևելյան անկյուն	6.0քմ
34	Սյասնիկյան փողոց թիվ 23	հյուսիսային պատի արևմտյան մաս	6.0քմ
35	Տիգրան Մեծի պող. թիվ 46	արևմտյան պատի հարավային մաս	6.0քմ
36	Գր.Լուսավորչի փողոց թիվ 53	հարավային պատի հարավարևելյան մաս	6.0քմ
37	Գր.Լուսավորչի փողոց թիվ 54	արևելյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
38	Վարդանանց փողոց թիվ 19	արևելյան պատի հարավային մաս	6.0քմ
39	Տիգրան Մեծի պող. թիվ 24	հյուսիսային պատի արևելյան մաս	6.0քմ
40	Նժդեհի փողոց թիվ 7	արևմտյան պատի հարավային մաս	6.0քմ
41	Գր.Լուսավորչի փողոց թիվ 49	հարավային պատի արևմտյան մաս	6.0քմ
42	Գր.Լուսավորչի փողոց թիվ 34	հյուսիսային պատի հարակից պարիսպ	6.0քմ
43	Գր.Լուսավորչի փողոց թիվ 29	հարավային պատի արևմտյան մաս	6.0քմ
44	Տիգրան Մեծի պող. թիվ 10	արևմտյան պատի հյուսիսային մաս	6.0քմ
45	Ղեմիրճյան փողոց թիվ 18	արևմտյան պատի հարավային մաս	6.0քմ
46	Բաթումի փողոց թիվ 15	հյուսիս-արևմտյան պատի անկյուն	6.0քմ
47	Վ.Համբարձումյան փողոց թիվ 11	արևմտյան ճակատ	6.0քմ
48	Սուխումի փողոց թիվ 3	հարավային ճակատ	6.0քմ
49	Սուխումի փողոց թիվ 14	հարավային ճակատ	6.0քմ
50	Վ.Համբարձումյան փողոց թիվ 8	արևմտյան ճակատ	6.0քմ
51	Աղայան փողոց թիվ 94	հյուսիսային ճակատ	6.0քմ
52	Իսահակյան փողոց թիվ 2	արևելյան ճակատ	6.0քմ
53	Ուսանողական փողոց թիվ 8	հյուսիսային ճակատ	6.0քմ
54	Աղայան փողոց թիվ 88	հարավային ճակատ	6.0քմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Q. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2021 թվականի N 2191

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ղ.ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 78/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՁԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԻՍԱ ԱՆԱՍՏԱՍԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալիսա Անաստասի Անտոնյանի 23.06.2021թ. թիվ 8858 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01102021-06-0036 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ղ.Աղայան փողոց 78/7 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 17.92քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.5քմ) մետաղական ավտոտնակը 48840 (քառասունութ հազար ութ հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 17.92քմ մակերեսով հողամասը 188410 (հարյուր ութսունութ հազար չորս հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ալիսա Անաստասի Անտոնյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալիսա Անաստասի Անտոնյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մետաղական ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏՍՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 28
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2021 թվականի N 2192

ԳԱԳԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գագիկ Մկրտումյանի վարչական բողոքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 17.08.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Գագիկ Մկրտումյանը Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոցի թիվ 37-2/3 հասցեում ինքնակամ կառուցել է բետոնե աստիճանահարթակ:

2021 թվականի օգոստոսի 17-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի սեպտեմբերի 02-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել են Նելլի Մարտիրոսյանը (հիմք՝ 21.08.2021թ. ստացված փոստային անդորրագիր) և Գագիկ Մկրտումյանը (հիմք՝ 21.08.2021թ. ստացված փոստային անդորրագիր):

17 սեպտեմբերի 2021 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է «Գագիկ Գուրգենի Մկրտումյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1936 որոշումը:

24.09.2021 թվականին Գագիկ Մկրտումյանը ներկայացրել է վարչական բողոք:

2021 թվականի հոկտեմբերի 22-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Գագիկ Մկրտումյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը ետ է վերադարձել «չպահանջված» նշումով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գագիկ Գուրգենի Մկրտումյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 28
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2021 թվականի N 2193

ՍՈՒՐԵՆ ՎԱՀԱՆԻ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Աբովյանի համաձայնությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սուրեն Վահանի Աբովյանին նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող:

2. Սուրեն Աբովյանի ծառայողական պարտականությունների սկիզբ սահմանել 2021 թվականի հոկտեմբերի 29-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 29
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2021 թվականի N 2194

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-20) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի նոյեմբերի 02-ին անցկացնել կրկնակի մրցույթ:

2. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - սոցիալական աշխատողի (ծածկագիր՝ 3.1-48) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի նոյեմբերի 02-ին անցկացնել մրցույթ:

3. Կրկնակի մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Սույն որոշման մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

5. Հաստատել կրկնակի մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 29
ք. Վանաձոր